ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2020թ. թիվ 352-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունների կատարող Լ.Վարդանյանի և քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Ղարսայանի զեկուցագրերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից Լ.Վարդանյանին և Վ.Ղարսայանին հատկացնել 182450 /մեկ հարյուր ութսուներկու հազար չորս հազար հիսուն/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. ապրիլի 13
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. ապրիլի 13-ի
թիվ 352-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	***Անուն Ազգանուն***	***Բնակավայր***	***Գումարը***
1	Վարդանյան Լուսինե	Թուրքիայից ժամանած մեր հայրենակիցներին բժշկական առաջին օգնություն ցուցաբերելու նպատակով	62450
2	Ղարսայան Վահրամ	Թուրքիայից ժամանած մեր հայրենակիցներին Բագրատաշենի անցակետից Լոռու մարզ տեղափոխելու համար	120000
	Ընդամենը		**182450**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ